ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը, առկա իրավիճակը.

«Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 21-ի ՀՕ-19-Ն օրենքով «Փրկարար ծառայության մասին» օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում փրկարարական ծառայողների աշխատանքային հարաբերություններին վերաբերող մի շարք հարցեր ներկայումս կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով: Նշված իրավակարգավորումները խնդրահարույց և անհամատեղելի են փրկարարական ծառայության առանձնահատկություններին, որոնց գործնական կիրառումը հանգեցնում է մի շարք խնդիրների:

Բացի այդ, նշված իրավակարգավորումների համատեքստում (գործող օրենքում) առկա են որոշակի հակասություններ և բացեր, որոնք մասնավորապես կապված են Փրկարար ծառայությունում պաշտոնների նշանակելու համար սահմանված նոր պայմանների և աշխատանքային ստաժի չափանիշների, ինչպես նաև ծառայողին նրա ցանկությամբ այլ պաշտոնի փոխադրման և այլ մարմիններ տեղափոխման վերաբերող դրույթների հետ և այլն:

Մասնավորապես.

1. «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն Փրկարար ծառայության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, «Հանրային ծառայության մասին» օրենքով, *«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով,* Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով ու իրավական ակտերով: Փրկարարական ծառայողների աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերը, որոնք կարգավորված չեն սույն օրենքով, կարգավորվում են *«Քաղաքացիական ծառայության մասին»* և «Հանրային ծառայության մասին» օրենքներով:

Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փրկարար ծառայության պաշտոնների խմբերում պաշտոնների դասակարգումն իրականացվում է փրկարար ծառայության պաշտոնների անվանացանկով: Անվանացանկը հաստատում և (կամ) փոփոխում է համապատասխան նախարարը, և վարվում է *«Քաղաքացիական ծառայության մասին»* օրենքով սահմանված կարգով:

Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ փրկարար ծառայության պաշտոնների համար կազմվում է պաշտոնի անձնագիր, որը *«Քաղաքացիական ծառայության մասին»* օրենքով սահմանված կարգով հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը:

Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ փրկարարական ծառայողի տեղափոխման, փոխադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են *«Քաղաքացիական ծառայության մասին»* օրենքով սահմանված կարգով:

Օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝ փրկարարական ծառայողների նկատմամբ կիրառվում են *«Քաղաքացիական ծառայության մասին»* օրենքով սահմանված խրախուսանքի տեսակները:

Օրենքի 58-րդ հոդվածը սահմանում է, որ *«Քաղաքացիական ծառայության մասին»* օրենքով սահմանված դեպքերում և կարգով փրկարարական ծառայողների նկատմամբ կիրառվում են *«Քաղաքացիական ծառայության մասին»* օրենքով սահմանված կարգապահական տույժերը:

Օրենքի 64-րդ հոդվածի համաձայն՝ փրկարար ծառայության կադրերի ռեզերվը վարվում է *«Քաղաքացիական ծառայության մասին»* օրենքով սահմանված կարգով և այլն:

Այս առումով հարկ է նշել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային ծառայության պաշտոնը հաստիքային միավոր է, որը նախատեսված է պետական ծառայության առանձին տեսակների համար նախատեսված պաշտոնների անվանացանկով: «Հանրային ծառայության մասին» օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ հանրային ծառայության առանձին տեսակների կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները սահմանվում են համապատասխան օրենքներով: «Հանրային ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը: Այսինքն, քաղաքացիական ծառայությունը և փրկարար ծառայությունը հանդիսանում են պետական ծառայության առանձին և ինքնուրույն տեսակներ, և փրկարարական ծառայությունը, ելնելով օրենքով իր առջև դրված խնդիրների և գործառույթների առանձնահատկություններից, առավել մոտ է զինվորական ծառայությանը: Հետևաբար, փրկարարական ծառայության, որպես պետական

ծառայության առանձին տեսակի, կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև փրկարարական ծառայողների աշխատանքային հարաբերությունները պետք է կարգավորվեն ոչ թե «Քաղաքացիական ծառայության մասին օրենքով, այլ՝ բացառապես «Փրկարար ծառայության մասին» օրենքով:

Միաժամանակ, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններում, Հանրապետության նախագահի աշխատակազմում, դատախազությունում, քննչական մարմիններում, անկախ պետական մարմիններում, ինքնավար մարմիններում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա պետական մարմիններում (այսուհետ՝ համապատասխան մարմին) քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա: Պետական ծառայության պաշտոնը համարվում է առանձնահատկություն ունեցող, եթե այն չի ընդգրկվում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում: «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով կարգավորվում են քաղաքացիական ծառայության պաշտոնի անվանացանկը հաստատելու (փոփոխելու) հետ կապված հարաբերությունները: Նշված իրավակարգավորումները կիրառելի չեն փրկարարական ծառայության պաշտոնների անվանացանկի հաստատման (փոփոխման) հետ կապված հարաբերությունների նկատմամբ, քանի որ փրկարարական ծառայության պաշտոնը, որպես պետական ծառայության պաշտոն, ունի առանձնահատկություն և չի ընդգրկվում քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում (քաղաքացիական ծառայության պաշտոնը քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված հաստիքային միավոր է):

Բացի վերոնշյալը, անհրաժեշտ է հիշատակել նաև Օրենքով, Փրկարարական ծառայության կանոնագրքով, «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» օրենքներով փրկարարական ծառայողների առջև դրված խնդիրների և փրկարարական ծառայության վրա քաղաքացիական ծառայության վերաբերյալ իրավակարգավորումների տարածման անհամատեղելիությունը: Մասնավորապես՝ Օրենքի, «Քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների մասին» օրենքի համաձայն Փրկարար ծառայությունը մասնակցում է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է Հայաստանի Հանրապետության սահմանամերձ տարածքներում հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի դեմ պայքարին, մարտական գործողությունների և զենքի կիրառման

հետևանքներից բնակչության պաշտպանությանը, կապտաժների, կամուրջների և այլ կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանությանը: «Պաշտպանության մասին» օրենքով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպումը խաղաղ ժամանակ ներառում է նաև անհրաժեշտ կառուցվածքով, թվակազմով, ժամանակակից սպառազինությամբ, ռազմական և այլ տեխնիկայով ու գույքով համալրված, բարձր մարտունակություն և պատրաստականություն ունեցող քաղաքացիական պաշտպանության և փրկարարական ստորաբաժանումների ստեղծումը, զարգացումը, ինչպես նաև դրանց ծավալման և կիրառման պլանավորումը: Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպումը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության և ռազմական գործողությունների պայմաններում ներառում է նաև քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերի փոխադրումն անհրաժեշտ մարտական պատրաստականության վիճակի, պատերազմական ժամանակաշրջանի կազմի և կառուցվածքի: Պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ զինված ուժերի կազմում ընդգրկվում են նաև քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերը: «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքը սահմանում է, որ ռազմական դրություն հայտարարվելու դեպքում իրականացվում է փրկարար ծառայության ստորաբաժանումների համալրում, լիակատար մարտական պատրաստականության փոխադրում և «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված միջոցառումների իրականացում: Ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով օգտագործվում են նաև քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների ուժերն ու միջոցները:

Թվարկված և օրենսդրական այլ խնդիրների արդյունավետ կատարումը, բնակչության կենսագործունեության ապահովումը հնարավոր է միայն փրկարարական ծառայողների մշտական մարտական և մասնագիտական պատրաստության բարձրացման և կատարելագործման արդյունքում, ինչն իր հերթին ենթադրում է փրկարարական ծառայության առավել ռազմականացում (իհարկե՝ ասվածը չի ենթադրում ամբողջական ծավալով): Նշվածի վառ ապացույցը Արցախի Հանրապետության նկատմամբ 2020 թվականի սեպտեմբերին ադրբեջանա-թուրքական ագրեսիան էր և արցախյան երկրորդ պատերազմը, որի ընթացքում փրկարարական ծառայության ստորաբաժանումները մասնակցում էին ոչ միայն քաղաքացիական պաշտպանության, հումանիտար միջոցառումներին, այլ նաև ակտիվ մարտական գործողությունների:

2. Ինչպես վերը հիշատակվեց, օրենսդրական փոփոխությունների արդյունքում փրկարարական ծառայության վրա քաղաքացիական ծառայության վերաբերյալ

իրավակարգավորումների տարածման քաղաքականության արդյունքում Օրենքով սահմանվեց փրկարարական ծառայության անցնելու մրցույթային կարգ: Օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ փրկարարական ծառայողները ծառայության անցնում են մրցույթի արդյունքներով: Մրցույթի ժամանակ ստուգվում է մասնակցի մասնագիտական և ֆիզիկական պատրաստվածությունը: Մրցույթի անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը: Նույն հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ փրկարարական ծառայողների առաջխաղացումն իրականացվում է սույն օրենքով սահմանված մրցույթի արդյունքների հիման վրա:

Այս առումով հարկ է նշել, որ «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքով ծառայության անցնելու մրցույթային կարգ սահմանված չէ:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանվում է զինծառայողի բարձր պաշտոնի նշանակում մրցույթի կամ ատեստավորման արդյունքներով: Այսինքն, նշված կարգավորման շրջանակներում մրցույթային կարգը իմպերատիվ (պարտադիր) բնույթ չի կրում, քանի որ կարող է անցկացվել ատեստացիա:

«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքով նախատեսվում է ոստիկանության ծառայողների պաշտոնի նշանակման ինչպես արտամրցութային, այնպես էլ մրցույթային կարգ, այն էլ միայն ոստիկանության ավագ և գլխավոր խմբերի թափուր պաշտոններում: Մինչև ոստիկանության թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելը՝ երկշաբաթյա ժամկետում, տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավասու է տվյալ թափուր պաշտոնում սույն օրենքով սահմանված կարգով նշանակելու տվյալ պաշտոնի համար ներկայացվող պահանջները բավարարող ոստիկանության ծառայողին: Ընդ որում, ոստիկանության ավագ և գլխավոր խմբերի թափուր պաշտոնները մրցույթի արդյունքներով զբաղեցվում են միայն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում արտամրցութային կարգով նշանակում չկատարվելու դեպքում:

Մինչդեռ, Օրենքը սահմանում է պարտադիր մրցույթային կարգ փրկարարական ծառայության բոլոր պաշտոնների խմբերում թափուր պաշտոն զբաղեցնելու համար:

Քննարկվող իրավակարգավորումները գործնականում առաջացնում են խոչընդոտներ փրկարարական ծառայության թափուր պաշտոնների մրցույթային կարգով համալրման հետ կապված, արդյունքում ունենում ենք Փրկարար ծառայությունում թափուր պաշտոնների (օղակի հրամանատար, պարամեդիկ, կինոլոգ, ջրասուզակ, հրշեջ, փրկարար, վարորդ, սակրավոր, օպերատոր, հրաձիգ և այլն) թերհամալրում, ինչն իր բացասական ազդեցությունն է թողնում ստորաբաժանումների առջև դրված խնդիրների (մարդկանց կյանքի փրկության, առողջության և գույքի պահպանության, պետության պաշտպանության, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների և փրկարարական, վթարային փրկարարական,

անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման աշխատանքների կատարման և այլն) արդյունավետ իրականացման, ընդհանուր առմամբ, վերջիններիս մարտունակության վրա:

Ներկայացվող նախագծով առաջարկվում է փրկարարական ծառայության անցման ինչպես արտամրցույթային, այնպես էլ մրցույթային կարգ, ընդ որում՝ պայմանով, որ գլխավոր և ավագ խմբերի թափուր պաշտոնները մրցույթի արդյունքներով զբաղեցվում են միայն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում (40-օրյա ժամկետում) արտամրցութային կարգով նշանակում չկատարվելու դեպքում: Մասնավորապես՝ մինչև փրկարարական ծառայության թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելը՝ 40-օրյա ժամկետում, տվյալ պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն ավագ և գլխավոր խմբերի թափուր պաշտոններում սույն օրենքով սահմանված կարգով իրավասու է նշանակելու տվյալ պաշտոնի համար ներկայացվող պահանջները բավարարող քաղաքացուն/փրկարարական ծառայողին:

Նշված իրավակարգավորումները տարածվում են նաև փրկարարական ծառայության պաշտոններում ծառայողների առաջխաղացման վրա:

3. Օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ Փրկարար ծառայության ղեկավարի տեղակալ կարող է նշանակվել *փրկարարական ծառայության այն ծառայողը, որը* նշանակման պահին զբաղեցնում է փրկարար ծառայության ղեկավարի պաշտոն, փրկարարական ծառայության բարձրագույն խմբի պաշտոն կամ վերջին հինգ տարին զբաղեցրել է գլխավոր խմբի պաշտոն և ունի փրկարարական ծառայության գնդապետից ոչ ցածր կոչում կամ *ունի հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:* Փրկարար ծառայության կենտրոնական ապարատի վարչության պետ կարող է նշանակվել *փրկարարական ծառայության այն ծառայողը,* որը նշանակման պահին զբաղեցնում է փրկարար ծառայության ղեկավարի կամ տեղակալի պաշտոն, բարձրագույն խմբի պաշտոն կամ մեկ տարի զբաղեցրել է գլխավոր խմբի պաշտոն և ունի փրկարար ծառայության փոխգնդապետից ոչ ցածր կոչում կամ *ունի հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ ունի չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:* Փրկարարական ծառայության գլխավոր խմբի պաշտոններում կարող են նշանակվել *այն ծառայողները,* որոնք մինչև նշանակումը վերջին երկու տարում զբաղեցրել են փրկարարական ծառայության գլխավոր խմբի այլ պաշտոն կամ երեք տարի՝ ավագ խմբի պաշտոն և ունեն փրկարար ծառայության մայորից ոչ ցածր կոչում կամ *ունեն հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:*

Այս առումով հարկ է նշել, որ Օրենքի 32-րդ հոդվածի դրույթների համադրության և համեմատական վերլուծության արդյունքում ի հայտ են գալիս ոչ բավարար հստակություն և հակասություններ, որոնք հակասում են իրավական որոշակիության սկզբունքին և դրանց գործնական կիրառման ընթացքում կարող են տարաբնույթ ընկալման տեղիք տալ: Մասնավորապես՝ անորոշ և ոչ բավարար հստակ են փրկարարական ծառայության համապատասխան պաշտոններում նշանակվելու համար սահմանված պայմանները և աշխատանքային ստաժի չափանիշները: Օրինակ՝ Փրկարար ծառայության ղեկավարի տեղակալի պաշտոն զբաղեցնելու համար փրկարարական ծառայողից պահանջվում է փրկարար ծառայության ղեկավարի պաշտոն, փրկարարական ծառայության բարձրագույն խմբի պաշտոն կամ վերջին հինգ տարին գլխավոր խմբի պաշտոն զբաղեցնելու պայման, մեկ այլ դեպքում՝ հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունենալու պայման և այլն:

Միաժամանակ, փրկարարական ծառայության, որպես պետական ծառայության տեսակի (հանրային ծառայությունը դասակարգվում է պետական ծառայության, իսկ փրկարարական ծառայությունը պետական ծառայության տեսակ է), ստաժը օրենքով նույնպես համարվում է հանրային ծառայության և մասնագիտական աշխատանքային ստաժ: Տվյալ իրավակարգավորումների գործնական կիրառումը հանգեցնում է տարաբնույթ մեկնաբանությունների, օրինակ՝ Փրկարար ծառայության կենտրոնական ապարատի վարչության պետ կարող է նշանակվել փրկարարական ծառայության այն ծառայողը, որը նշանակման պահին զբաղեցնում է փրկարար ծառայության ղեկավարի կամ տեղակալի պաշտոն, բարձրագույն խմբի պաշտոն կամ մեկ տարի զբաղեցրել է գլխավոր խմբի պաշտոն, միաժամանակ Փրկարար ծառայության կենտրոնական ապարատի վարչության պետ կարող է նշանակվել փրկարարական ծառայության այն ծառայողը, որն ունի հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ ունի չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

4. «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 21-ի ՀՕ-19-Ն օրենքով նոր խմբագրությամբ շարադրված 33-րդ հոդվածով (ընդ որում՝ ուժի մեջ է մտնում 2022թ. հունվարի 1-ից) փրկարարական ծառայողների համար սահմանվել է կատարողականի գնահատման կարգ, որի համաձայն՝ փրկարարական ծառայողի կատարողականի գնահատման հետ կապված հարաբերությունները պետք է կարգավորվեն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

Ըստ գործող օրենսդրության, կատարողականների գնահատումն իրականացվում է աշխատանքային ծրագրերի կազմման և կատարողականների գնահատման էլեկտրոնային

փաստաթղթաշրջանառության համակարգով: Հարկ է նշել, որ փրկարարական ծառայության, որպես առանձնահատուկ պետական ծառայության, ծառայողների կատարողականի գնահատումը գործնականում կարող է հանգեցնել դժվարությունների, նույնիսկ՝ անհնարինության: Ընդ որում, շտաբային գործառույթներ իրականացնում են փրկարարական ծառայողների շուրջ 10-20 տոկոսը: Ինչ սկզբունքով պետք է իրականացվի հրշեջ-փրկարարների և քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումների ծառայողների կատարողականի գնահատումը, որոնց գործառույթներն են՝ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը, հրդեհաշիջումը, վթարափրկարարական, ջրափրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները և այլն: Նշված գործառույթները հնարավոր չէ ընդգրկել աշխատանքային ծրագրերում, այնուհետև՝ մուտքագրել էլեկտրոնային համակարգ և դրանց արդյունքներով գնահատել կատարողականը: Վերը շարադրված հիմքով, օրինակ, կատարողականի գնահատման կարգ չի գործում Զինված ուժերում, Ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության համակարգերում:

Միաժամանակ, Նախագծով առաջարկվում է ատեստավորման արդյունքում ձևավորել ծառայողական առաջխաղացման ցուցակներ, որոնց հիման վրա, ըստ անհրաժեշտության, կկատարվի փրկարարական ծառայողների առաջխաղացումը:

5. Օրենքի 68-րդ հոդվածի համաձայն՝ Նախարարությունն իր և փրկարարական ծառայության խնդիրների, գործառույթների կատարումը և իր համակարգը բարձր որակավորման մասնագետներով ապահովելու, ծառայողներին վերապատրաստելու (որակավորելու), բնակչության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ուսուցումն ապահովելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված գործառույթներն իրականացնելու նպատակով ունի ուսումնական հաստատություններ: Օրենքի 69-րդ հոդվածը սահմանում է, որ Նախարարության բարձրագույն ուսումնական հաստատության պետի պաշտոնը փրկարարական ծառայության բարձրագույն խմբի պաշտոն է: Նախարարության բարձրագույն ուսումնական հաստատության պետի մասնագիտացված տեղակալների, մասնագիտական ֆակուլտետների, ամբիոնների ղեկավարների, նրանց տեղակալների, մասնագիտական առարկաներ դասավանդող պրոֆեսորների, դոցենտների, բարձրագույն ուսումնական հաստատության ասիստենտի պաշտոնները փրկարարական ծառայության գլխավոր խմբի պաշտոններ են, իսկ նշված ամբիոնների բաժնի պետերի և դասախոսների պաշտոնները՝ ավագ խմբի պաշտոններ: Նախարարության բարձրագույն ուսումնական հաստատության հիմնարկների, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների ղեկավարների պաշտոնները համապատասխանում են փրկարարական ծառայության ավագ

խմբի պաշտոններին, իսկ դրանց մասնագիտական ստորաբաժանումների ծառայողներինը՝ միջին խմբի պաշտոններին:

Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ Փրկարար ծառայության հաստիքների առավելագույն քանակը որոշում է վարչապետը: Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թիվը սահմանելու մասին» N 706-Ա որոշման N4 հավելվածով սահմանվել է Փրկարար ծառայության, որպես նախարարությանը ենթակա մարմնի, հաստիքների առավելագույն թիվը, որի մեջ ներառված չեն Նախարարության ուսումնական հաստատության փրկարարական ծառայողների հաստիքների թիվը:

Նախկինում (Օրենքի նախկին խմբագրության շրջանակներում՝ այն է «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1.1-ին մասի հիմքով, որը ուժը կորցրել է 2018 թվականի մարտի 23-ին ընդունված «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքով) խնդիրը կարգավորվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 1-ի N 277-Ն որոշմամբ սահմանված Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության, այդ թվում՝ փրկարարական ծառայության գործուղված հաստիքների հաշվին (Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա են գործուղվել թվով 18 փրկարարական ծառայության հաստիքներ):

Վերը նշված խնդրի կարգավորման հնարավոր տարբերակներն են.

առաջին՝ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքով սահմանված կարգով Նախարարության ուսումնական հաստատությունը կարող է հանձնվել Փրկարար ծառայության ենթակայությանը,

երկրորդ՝ Օրենքում նախաձեռնել փոփոխություններ, համաձայն որի՝ օրենսդրորեն վերականգնել փրկարարական ծառայության գործուղված հաստիքների ինստիտուտը:

Ներկայացվող նախագծով առաջարկվում է երկրորդ տարբերակը:

6. Նախկինում փրկարարական ծառայողին ներկայացվող մասնագիտական, ֆիզիկական պատրաստվածության, առողջական վիճակի հետ կապված պահանջներն ու փրկարարական ծառայությանը խոչընդոտող հիվանդությունների և ֆիզիկական թերությունների ցանկը սահմանվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 55-Ն որոշմամբ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 55-Ն որոշման համար իրավական հիմք է հանդիսացել Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը: «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 2020 թվականի հունվարի 21-ի ՀՕ-

19-Ն օրենքով Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած է ճանաչվել: Ելնելով վերոնշյալ իրավական նորմի պահանջից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1545-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 55-Ն որոշումը: ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 55-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու պարագայում իրավական կարգավորումից դուրս են մնում *փրկարարական ծառայողին ներկայացվող ֆիզիկական պատրաստվածության պահանջները և փրկարարական ծառայողին կամ փրկարարական ծառայության անցնելու համար դիմած քաղաքացուն առողջության մասին եզրակացություն տալու համար բժշկական փորձաքննության ժամանակ փրկարարական ծառայությանը խոչընդոտող հիվանդությունների ցանկի կիրարկման կարգը* սահմանելու հետ կապված հարաբերությունները (քանի որ Օրենքով ուժը կորցրած են ճանաչվել համապատասխան լիազորող նորմերը): Հարկ է հավելել, որ հիմք ընդունելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 98-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 55-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1545-Ն որոշմամբ կատարվել են լրացումներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի «Հանրային ծառայության պաշտոնն զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացմանը, ինչպես նաև ուսումնական հաստատություններում մանկավարժական կամ վարչական գործունեությանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 98-Ն որոշման մեջ, համաձայն որի, որոշման N 2 հավելվածով հաստատվել է փրկարարական ծառայության ծառայողների լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը:

Սակայն, ինչպես նշվեց, մինչ օրս բացակայում են փրկարարական ծառայողին ներկայացվող մասնագիտական ու ֆիզիկական պատրաստվածության պահանջները, ինչպես նաև փրկարարական ծառայողին կամ փրկարարական ծառայության անցնելու համար դիմած քաղաքացուն առողջության մասին եզրակացություն տալու համար բժշկական փորձաքննության ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 98-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված փրկարարական ծառայության ծառայողների լիազորությունների իրականացմանը խոչընդոտող

հիվանդությունների ցանկի կիրարկման կարգը սահմանելու վերաբերյալ օրենքով նախատեսված լիազորող նորմերը:

Ուստի, անհրաժեշտ է օրենսդրական փոփոխությունների արդյունքում Օրենքով ամրագրել փրկարարական ծառայողին ներկայացվող մասնագիտական ու ֆիզիկական պատրաստվածության պահանջները և փրկարարական ծառայողին կամ փրկարարական ծառայության անցնելու համար դիմած քաղաքացուն առողջության մասին եզրակացություն տալու համար բժշկական փորձաքննության ժամանակ փրկարարական ծառայության ծառայողների լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկի կիրարկման կարգը սահմանելու լիազորող նորմեր, ընդ որում, նպատակահարմար է նշված լիազորությունը վերապահել Արտակարգ իրավիճակների նախարարին:

Հարկ է հավելել նաև, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 18-ի N 976-Ա որոշմամբ լուծարվել է Արտակարգ իրավիճակների նախարարության «Աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: Ներկայումս Արտակարգ իրավիճակների նախարարությունում բացակայում է Փրկարար ծառայությունում ծառայության անցնելու համար դիմող քաղաքացիների փրկարարական ծառայությանը պիտանելիությունն որոշելու նպատակով բժշկական փորձաքննություն անցկացնելու համար բժշկական հետազոտություն իրականացնող համապատասխան բժշկական հաստատություն, և Փրկարար ծառայությունում ծառայության անցնելու համար դիմող քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 98-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված կարգով բժշկական հետազոտությունը պետք է իրականացվի արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական հաստատությունների կողմից, ինչն գործնականում առաջացնում է խնդիրներ:

Միաժամանակ, Նախագծով առաջարկվում է, որպես պարտադիր պայման, սահմանել փրկարարական ծառայությունում ծառայության անցնող քաղաքացիների և փրկարարական ծառայողների հոգեֆիզիոլոգիական հետազոտություն անցնելու պահանջ:

7. «Պաշտպանության մասին» օրենքով սահմանվում է, որ պետության ռազմական անվտանգության համակարգի բաղկացուցիչ մաս են կազմում նաև քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերը: Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպումը խաղաղ ժամանակ ներառում է նաև զորահավաքային նախապատրաստությունը, որն իր հերթին ներառում է նաև քաղաքացիների կցագրումը զինված ուժերի պատերազմական ժամանակաշրջանի հաստիքներին, քաղաքացիների ամրագրումը, քաղաքացիական պաշտպանության և

արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերի զորահավաքային ծավալման ապահովման նպատակով ուսումնավարժական հավաքների ու պարապմունքների անցկացումը: Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպումը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության և ռազմական գործողությունների պայմաններում ներառում է նաև քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերի փոխադրումն անհրաժեշտ մարտական պատրաստականության վիճակի, պատերազմական ժամանակաշրջանի կազմի և կառուցվածքի: Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն օրենքով սահմանված կարգով մասնակցում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը նաև քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին ներգրավվելու միջոցով: «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը մասնակցել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքը սահմանում է, որ ռազմական դրություն հայտարարվելու դեպքում ռազմական դրության ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվում է փրկարար ծառայության ստորաբաժանումների համալրում, լիակատար մարտական պատրաստականության փոխադրում և «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված միջոցառումների իրականացում, ինչպես նաև առանձնահատուկ դեպքերում, կապված վթարավերականգնողական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման ու ապահովման անհրաժեշտության հետ, աշխատունակ բնակչության և տրանսպորտային միջոցների ներգրավում:

Հետևաբար, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում ռազմական դրություն հայտարարվելու դեպքում ռազմական դրության ամբողջ ժամկետի ընթացքում, օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպման և քաղաքացիներին քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին ու վթարավերականգնողական և այլ անհետաձգելի աշխատանքներում աշխատունակ բնակչության ներգրավելու նպատակով Փրկարար ծառայության ստորաբաժանումների համալրման, լիակատար մարտական պատրաստականության, պատերազմական ժամանակաշրջանի կազմի և կառուցվածքի փոխադրման համար անհրաժեշտ է Օրենքով ամրագրել Փրկարար ծառայության պատերազմական

ժամանակաշրջանի հաստիքային թվաքանակի և դրանից բխող հաստիքացուցակի վերաբերյալ իրավակարգավորումներ, մասնավորապես՝

- Փրկարար ծառայության պատերազմական ժամանակաշրջանի հաստիքների առավելագույն թվաքանակը սահմանում է վարչապետը,

- Փրկարար ծառայության պատերազմական ժամանակաշրջանի հաստիքացուցակը սահմանում է համապատասխան նախարարը,

- Փրկարար ծառայության պատերազմական ժամանակաշրջանի հաստիքներին կցագրումը և հաստիքների համալրումը կատարվում է «Պաշտպանության մասին» օրենքով սահմանված կարգով՝ զորահավաքային զորակոչի միջոցով Փրկարար ծառայության ստորաբաժանումների համալրման եղանակով, այդ թվում՝ փրկարար ծառայությունից ազատված ու պահեստազորում հաշվառված (ինչպես զինված ուժերի պատերազմական ժամանակի հաստիքներին կցագրված, այնպես էլ՝ չկցագրված) քաղաքացիներից:

8. «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *պետական կառավարման* և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից *հաշմանդամի աշխատանքային զբաղվածության երաշխիքներն ապահովվում են* կազմակերպություններում հաշմանդամներին *աշխատանքի ընդունելու համար քվոտաների և հաշմանդամների համար՝ օրենսդրությամբ սահմանված միջոցառումների իրականացմամբ*, հաշմանդամներին առավել համապատասխանող մասնագիտություններով աշխատանքային տեղերի վերապահմամբ, հաշմանդամների համար *լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման խրախուսմամբ*, հաշմանդամին աշխատանքի տեղավորելու դեպքում գործատուին հաշմանդամին վճարվող աշխատավարձի մասնակի փոխհատուցմամբ:

9. Օրենքով փրկարարական ծառայողի նկատմամբ կարող է կիրառվել նաև «կոչման իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժ: Ըստ օրենսդրության, կարգապահական տույժերը համարվում են վերացած (ծառայողը համարվում է կարգապահական տույժ չունեցող) օրենքով սահմանված ժամկետում դրանց մարվելու կամ մինչև ժամկետի լրանալը որպես խրախուսման միջոց՝ հանվելու դեպքում: Կոնկրետ պարագայում «կոչման իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժի մարման կամ հանելու դեպքում (տես՝ Փրկարարական ծառայության կանոնագրքի 71-րդ հոդված) իջեցված կոչումը պետք է վերականգնվի, իսկ ծառայողական քննություն նշանակելու և անցկացնելու դեպքերը և հիմքերը սահմանվում են օրենսդրությամբ:

10. Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ փրկարարական կոչումը վերականգնելու վերաբերյալ զեկուցագրերը քննարկում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստացիոն հանձնաժողովը: Մինչդեռ, 21.01.20թ. ՀՕ-19-Ն օրենքով

կատարված փոփոխությամբ 28-րդ հոդվածի 1-ին մասից հանվել «, ինչպես նաև համապատասխան նախարարի կողմից ստեղծված ատեստացիոն հանձնաժողովի որոշման առկայության» բառերը, ինչի արդյունքում առաջանում է հակասություն 28-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի միջև:

11. Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ամենամյա արձակուրդից հետ կանչելը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում՝ ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, արձակուրդ տրամադրող պաշտոնատար անձի հրամանով: Օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հերթական արձակուրդից ծառայողին կանչել թույլատրվում է միայն ծառայողական ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ արձակուրդ տրամադրած պաշտոնատար անձի հրամանով: Գործող իրավակարգավորմամբ արձակուրդից հետ կանչելու ընթացակարգը կիրառվում է բացառապես արձակուրդ տրամադրող պաշտոնատար անձի հրամանով: Հրաման ընդունելու գործընթացն ենթադրում է համապատասխան անհատական իրավական ակտի նախագծի մշակում, սահմանված կարգով էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ նախագծի մուտքագրում, անհրաժեշտ համաձայնությունների ձեռք բերում, իրավասու պաշտոնատար անձի կողմից հաստատում, իրավական ակտի կոդիֆիկացում և սահմանված կարգով հասցեատիրոջը ծանուցում (ուժի մեջ մտնել): Արտակարգ իրավիճակների կամ ռազմական դրության պայմաններում արձակուրդում գտնվող փրկարարական ծառայողներին ծառայողական անհրաժեշտությունից ելնելով արձակուրդից հրամանով հետ կանչելը ժամանակատար գործընթաց է, ինչը կարող է իր բացասական հետևանքները թողնել արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, փրկարարական և այլ աշխատանքների, ինչպես նաև ռազմական դրության ժամանակ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման արդյունավետության վրա, միաժամանակ նշված գործընթացը լացուցիչ աշխատանքային ծանրաբեռնվածություն կառաջացնի: Առաջարկվող իրավակարգավորման համաձայն ռազմական դրություն հայտարարվելու կամ արտակարգ իրավիճակների դեպքում ծառայողի արձակուրդը կընդհատվի առանց անհատական իրավական ակտ ընդունելու, օրենքի ուժով՝ ռազմական դրության կամ արտակարգ իրավիճակների տևողությամբ, բացառությամբ հիվանդության, կին ծառայողի հղիության, ծննդաբերության և ծառայողի՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդի, ինչպես նաև այն ծառայողների, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով՝ այսինքն իրավասու պաշտոնատար անձի թույլտվությամբ արձակուրդն անցկացնում են արտերկրում: Այնուհետև, օրենքով սահմանված կարգով ռազմական դրության գործողության դադարեցման կամ արտակարգ իրավիճակի վերացման դեպքում ծառայողի ընդհատված

արձակուրդի ժամկետը կվերսկսվի, և ընդհատված ժամանակահատվածը չի հաշվարկվի արձակուրդի ժամկետում):

12. Օրենքի 71-րդ հոդվածը կարգավորում է փրկարարական ծառայողի կողմից ուսման ծախսերի փոխհատուցման հետ կապված հարաբերությունները: Մասնավորապես՝ սահմանում է այն դեպքերը, երբ փրկարարական ծառայողը և ուսուցման գործուղված ուսումնական հաստատությունում սովորողը պարտավոր է փոխհատուցել իր՝ ուսումնական հաստատությունում ուսման կամ օտարերկրյա պետությունում կազմակերպված ուսուցման և վերապատրաստման համար պետության կատարած ծախսերը:

Միաժամանակ, Օրենքը սահմանում է նաև բացառություններ, երբ Օրենքով նախատեսված դեպքերում ծառայողը չի հատուցում ուսման կամ վերապատրաստման (որակավորման) համար պետության կատարած ծախսերը: Մասնավորապես՝

- եթե ծառայողը բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո ծառայել է ոչ պակաս, քան հինգ տարի կամ վերապատրաստումն (որակավորումն) անցնելուց հետո ոչ պակաս, քան երկու տարի,

- ծառայությունից ազատվել է հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքերում, եթե ծառայողին համապատասխան համարժեք պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է փրկարարական ծառայության հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ, հիվանդության պատճառով կամ անձնական նախաձեռնությամբ՝ պայմանավորված ընտանիքի հաշմանդամ անդամի խնամքով:

Սակայն, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ փրկարարական ծառայողը բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո մինչև 5 տարին լրանալը կամ վերապատրաստումն (որակավորումն) անցնելուց հետո մինչև երկու տարին լրանալը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ տեղափոխվի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կամ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգեր հետագա ծառայությունը շարունակելու, ինչը, առկա իրավական կարգավորման պայմաններում հիմք կհանդիսանա ուսման վարձավճարի փոխհատուցման պահանջի: Նման դեպքում, փրկարարական ծառայողին այլ ելք չի մնում, քան փոխհատուցել իր ուսման և վերապատրաստման համար պետության կողմից կատարված ծախսերը և նոր միայն անցնել ծառայության նշված պետական մարմիններում:

Մինչդեռ, ինչպես նշված է վերոհիշյալ նորմում, փրկարարական ծառայողի և ուսումնական հաստատությունում սովորողի ուսման և վերապատրաստման համար ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին և հանրային շահերի տեսանկյունից ոչ մի տարբերություն չկա, թե պետությունը պետական որ մարմնի ծառայողի ուսման և վերապատրաստման համար է կատարում նշված ծախսերը:

13. Գործնականում Օրենքով սահմանված կարգով փրկարարական ծառայողին ռոտացիայի և/կամ ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված հիմնական (մշտական) բնակության վայրից դուրս այլ պաշտոնի փոխադրելու դեպքում ծառայողը կրում է լրացուցիչ ֆինանսական ծախսեր, մասնավորապես՝ ծառայության նոր վայր մեկնելու (վերադառնալու) ճանապարհածախս, ծառայության նոր վայրում իր և ընտանիքի անդամների կեցության (բնակարանով ապահովման կամ բնակելի տարածության վարձակալության վճար) և անհրաժեշտ այլ ծախսեր: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում փրկարարական ծառայողին ռոտացիայի և/կամ ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված հիմնական բնակության վայրից 50 կիլոմետրից ավելի հեռավորությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում այլ պաշտոնի փոխադրելու դեպքում օրենսդրությամբ սահմանել վերջինիս և նրա ընտանիքի անդամներին ծառայողական բնակելի տարածությամբ ապահովելու կամ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում վճարելու վերաբերյալ իրավակարգավորումներ:

14. «Հանրային ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածի համաձայն՝ պետական ծառայության առանձին տեսակների (այդ թվում նաև՝ փրկարար ծառայության) համար ստեղծվում են էթիկայի առանձին հանձնաժողովներ: Հանրային ծառայողների (այդ թվում՝ փրկարարական ծառայողների) բարեվարքության պահանջների պահպանմանը հետևում են պետական ծառայության առանձին տեսակների մասին օրենքներով (կոնկրետ դեպքում՝ «Փրկարար ծառայության մասին» օրենքով) ստեղծված էթիկայի հանձնաժողովները, որոնց գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակների մասին օրենքներով:

Այսինքն, վերոնշյալ դրույթների համաձայն՝ փրկարարական ծառայողների էթիկայի հանձնաժողովը պետք է ստեղծվի և նրա գործունեությունը կարգավորվի «Փրկարար ծառայության մասին» օրենքով:

Մինչդեռ, «Փրկարար ծառայության մասին» օրենքի 60-րդ հոդվածը սահմանում է, որ փրկարարական ծառայողների էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը, վարքագծի կանոնները խախտելու և (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները,

նվերներ ընդունելու արգելքը խախտելու, անհամատեղելիության պահանջները չպահպանելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

Հաշվի առնելով փրկարարական ծառայության, որպես պետական ծառայության առանձին տեսակի, կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի պահանջները (այն է՝ պետական ծառայության առանձին տեսակների համար պետք է ստեղծվեն էթիկայի առանձին հանձնաժողովներ՝ պետական ծառայության առանձին տեսակների մասին օրենքներով) փրկարարական ծառայողների էթիկայի հանձնաժողովի ձևավորման և գործունեության հետ կապված «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված իրավակարգավորումները գործնականում կհանգեցնեն խնդիրների և անհամատեղելի են փրկարարական ծառայության առանձնահատկություններին:

Հետևաբար, նպատակահարմար է փրկարարական ծառայողների էթիկայի հանձնաժողովի ձևավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորել «Փրկարար ծառայության մասին» օրենքով՝ օրենքում կատարելով համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

15. Գործող օրենքի համաձայն՝ փրկարարական ծառայության բոլոր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների ծառայության ժամկետն երկարաձգելու իրավասությունը վերապահվում է նախարարին: Մինչդեռ, Օրենքով կրտսեր խմբի պաշտոններում նշանակում և ազատում է Փրկարար ծառայության տնօրենը: Ստացվում է մի իրավիճակ, երբ տվյալ պաշտոնում նշանակելու և ազատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը օրենքով զրկված է տվյալ ծառայողի ծառայության ժամկետն երկարաձգելու իրավասությունից, ինչը իրավակիրառ պրակտիկայում առաջ է բերում խնդիրներ: Ուստի, Նախագծով նախատեսվում է, որ փրկարարական ծառայողների ծառայության ժամկետն երկարաձգվի տվյալ պաշտոնում նշանակելու և ազատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից:

<u>Նախագծի ընդունումը պայմանավորված է վերը շարադրված խնդիրների իրավական կարգավորման անհրաժեշտությամբ: Սույն օրենսդրական նախաձեռնությունը պայմանավորված է նաև պետական կառավարման համակարգի բարեփոխումների իրականացման ընթացքում փոփոխությունների արդյունքում առաջացած հակասությունների և ներկայումս գործող մի շարք իրավական ակտերում առկա հիմնախնդիրների կարգավորման անհրաժեշտությամբ:</u>

2. Առաջարկվող կարգավորման բնույթը և նպատակը.

Ներկայացվող նախագծով առաջարկվում է՝

1. հստակեցնել Արտակարգ իրավիճակների նախարարությանը ենթակա մարմնի հանդիսացող Փրկարար ծառայության կարգավիճակը՝ հիմք ընդունելով Սահմանադրության 159-րդ հոդվածի նորմը և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի դրույթները.

2. հստակեցնել և լրացնել Փրկարար ծառայության լիազորությունները՝ հաշվի առնելով գործնականում առաջացող հիմնախնդիրները, ինչպես նաև Արտակարգ իրավիճակների նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների լուծարումից հետո վերջիններիս կողմից կարգավորվող ոլորտների համար անհրաժշտ գործիքակազմի պահպանումը.

3. հստակեցնել փրկարարական ծառայողների պաշտոնի նշանակման կարգը՝ հաշվի առնելով, որ «Փրկարար ծառայության մասին» օրենքում առկա են գործուղված հաստիքներին վերաբերող թերի կարգավորումներ, ինչպես նաև նախատեսվել է հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածությունը փրկարարական ծառայության շարքերում՝ առանձին գործառույթների իրականացման համար (Օրինակ՝ Ճգնաժամային կառվարման ազգային կենտրոնի (վարչություն) 911 ԱԿ կրտսեր հրահանգչի (911 օպերատոր) պաշտոնում).

4. բացի փրկարարական ծառայողների հիմնական հաստիքների, որոնք կատարում են օրենսադրությամբ Փրկարար ծառայության առջև դրված խնդիրները և ծառայությունն իրականացնում են մշտական հիմունքներով, Օրենքով սահմանել նաև Փրկարար ծառայության պատերազմական ժամանակաշրջանի հաստիքացուցակի հետ կապված իրավակարգավորումներ, որը հնարավորություն կտա պատերազմի դեպքում՝ ժամանակավորապես, համալրել Փրկարար ծառայության համապատասխան ստորաբաժանումները՝ մարտական և արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման խնդիրների արդյունավետ կատարման նպատակով.

5. հստակեցնել կադրային քաղաքականության իրականացման հետ կապված մի շարք հարցեր, մասնավորապես՝ հստակեցվում է «լեյտենանտ» փրկարարական կոչումը շնորհելու կարգը՝ նկատի ունենալով Օրենքի 25-րդ հոդվածի «բ» և «զ» կետերի բովանդակային առումով նույնանման լինելը, ինչպես նաև 2020 թվականի հունվարի 21-ին ընդունված ««Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-19-Ն ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսվող իրավակարգավորումները, հստակեցվում են նաև վաղաժամկետ կոչումներ

շնորհելու պայմանները, հերթական կոչում շնորհելիս նախկին կոչումով պահեստազորում եղած ժամանակահատվածը՝ ըստ կոչումների խմբերի, նախատեսվում փրկարարական ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը, խրախուսանքի տեսակները սահմանել Օրենքով (գործող Օրենքով համապատասխան դրույթներում հղում է կատարվում «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքին)՝ առավել հստակեցնել դրանց կիրառման հետ կապված կարգավորումները, հստակեցվում և առավել համապարփակ կարգավորման են ենթարկվում փրկարարական ծառայողների ծառայությունից ազատման, զբաղեցրած պաշտոնից ազատման և կադրերի ռեզերվում գրանցման (ռեզերվից հանման) հիմքերը և կարգը, ինչպես նաև կադրերի ռեզերվում գրանցելու և ռեզերվից հանելու լիազորող նորմերը (նշված նորմերը ներկայումս սահմանվում են Կառավարության որոշմամբ, ինչը հակասում է Սահմանադրության 6-րդ հոդվածին), սահմանվում է փրկարարական ծառայության անցման ինչպես մրցույթային, այնպես էլ՝ արտամրցույթային կարգ, իսկ փրկարարական ծառայողների առաջխաղացումն իրականացվի ատեստավորման արդյունքում, հստակեցվում և որոշակիացվում են նաև փրկարարական ծառայության պաշտոնի նշանակման պայմանները, կրթության ու աշխատանքային/ծառայողական ստաժի չափանիշները, հստակեցնել փրկարարական ծառայության անցման պայմանագրի կնքման (ստորագրման, գործողության ժամկետի և դրա երկարաձգման, ուժի մեջ մտնելու և այլն) հետ կապված իրավակարգավորումները, հստակեցնել ատեստավորման և վերապատրաստամն հետ կապված իրավակարգավորումները՝ հիմք ընդունելով պետության որդեգրած կադրային քաղաքականությունը, հստակեցնել փրկարարական ծառայողին այլ պաշտոնի փոխադրման ժամկետները, արձակուրդների տրման հետ կապված իրավակարագավորումները, նախատեսել, որ փրկարարական ծառայողների ծառայության ժամկետն երկարաձգվի տվյալ պաշտոնում նշանակելու և ազատելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից և այլն.

6. նախատեսել, որ Փրկարարական ծառայությունում ծառայության՝ պարտադիր զինվորական ծառայության, առողջական վիճակի, ինչպես նաև ֆիզիկական պատրաստվածության հետ անմիջականորեն չկապված առանձին գործառույթների իրականացման համար, կարող են անցնել նաև «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունեն սոցիալական պաշտպանության

անհրաժեշտություն (հաշմանդամ), որոնց նկատմամբ չեն կիրառվում օրենքով ծառայության անցնելու համար նախատեսված պահանջները.

7. հստակեցնել «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հունվարի 21-ի ՀՕ-19-Ն օրենքի ընդունումից հետո պաշտոնների նշանակելու համար սահմանված նոր պայմանները և աշխատանքային ստաժի չափանիշները՝ հանելով հանրային ծառայության, մասնագիտական աշխատանքային և պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում աշխատանքային ստաժին վերաբերող չափանիշները՝ հաշվի առնելով, որ Փրկարար ծառայության ծառայողները, որպես հանրային ծառայողներ, կարող են ունենալ պահանջվող հանրային ծառայության և մասնագիտական աշխատանքային ստաժը, սակայն ըստ էության չեն զբաղեցրել փրկարարական ծառայության համապատասխան խմբի պաշտոնի և չունեն պահանջվող փրկարարական ծառայության կոչում.

8. նախատեսել դրույթ, որը հնարավորություն կտա ծառայողին վերջինիս ցանկությամբ և պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համաձայնության դեպքում տեղափոխվել կառուցվածքային ստորաբաժանումների հավասարազոր պաշտոնին կամ իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանող խմբում՝ ոչ ավելի, քան երկու աստիճանով ցածր պաշտոնի և (կամ) ծառայության այլ վայր՝ տվյալ պաշտոնում առնվազն վեց ամիս ծառայելուց հետո.

9. հաշվի առնելով գործնականում նման իրավակարգավորումների անհրաժեշտությունը, առաջարկվում է նախատեսել փրկարարական ծառայողների պետական այլ մարմիններ, ուսումնական հաստատություններ գործուղելու, փրկարարական ծառայության թափուր կամ այլ պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարող նշանակելու վերաբերյալ իրավակարգավորումներ.

10. առաջարկվում է օրենքով սահմանված ընդհանուր կանոնից նախատեսել բացառություն և նախարարության ուսումնական հաստատությունում փրկարարական ծառայության բարձրագույն, գլխավոր և ավագ խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների ծառայության ժամկետն երկարաձգել մինչև 10 տարի ժամկետով՝ հաշվի առնելով փրկարարական ծառայության ոլորտում ուսումնական գործընթացների կազմակերպման առանձնահատկությունները, ինչպես նաև դասախոսական կազմի համալրման բարդությունները և գործող օրենսդրությամբ սահմանված տարիքային սահմանափակումները: Հստակեցվում են նաև ուսումնական հաստատությունում ուսուցման հետ կապված իրավակարգավորումները՝ հաշվի առնելով, որ գործող կարգավորումներն արդիական չեն և չեն համապատասխանում ներկայիս օրենսդրությանը, մասնավորապես՝

օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության տարկետման իրավունքի, կուրսանտների ուսուցման և այլն.

11. հստակեցնել է ծառայողների Փրկարար ծառայության կադրերի ռեզերվում գրանցման հնարավորությունը: Մասնավորապես, սահմանվել է ուսման գործուղված ծառայողներին մինչև ուսման ավարտը կադրերի ռեզերվում գրանցման հնարավորությունը՝ վերջինիս կողմից նախկինում զբաղեցրած հաստիքը համալրելու նպատակով, ինչպես նաև կարգավորվել է Փրկարար ծառայության ծառայողների պաշտոններից ազատման դեպքերում վերջիններիս կադրերի ռեզերվում գրանցման դրույթները, հաշվի առնելով, որ ներկայումս «Փրկարար ծառայության մասին» օրենքով սահմանվում է մինգամից երկու վավերապայմանների առկայությունը՝ և հաստիքների կրճատումը, ստորաբաժանման լուծարումը կամ վերակազմակերպումը, որոնք իրականացվում են ԱԻ նախարարի հրամանով, և Փրկարար ծառայության հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ, որոնք սահմանված են վարչապետի որոշմամբ, ինչը գործնականում ստեղծում է խոչնդոտ ծառայողներին կադրերի ռեզերվում գրանցման դեպքերում.

12. վերապահել փրկարար ծառայողների բուժսպասարկման գործառույթները Փրկարար ծառայության կազմում գործող համապատասխան բժշկական ստորաբաժանումը, որն ամբողջ ծավալով գործելու է «Աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության լուծարումից հետո: Հարկ է նաև հավելել, որ Նախագծով նախատեսվում է սահմանել կարգավորում, որի համաձայն փրկարարական ծառայողները և նրանց ընտանիքի անդամները (այդ թվում՝ կենսաթոշակառուները ու նրանց ընտանիքների անդամները) ապահովվելու են անվճար որակյալ բուժօգնությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի բուժհիմնարկներում.

13. նախագծով առաջարկվում է հնարավորություն տալ փրկարարական ծառայողներին ուսումնական հաստատությունն ավարտելուց և Փրկարար ծառայությունում առնվազն երեք տարի ծառայելուց հետո «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն հետագա ծառայությունը շարունակելու համար տեղափոխվելու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կամ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգեր, ու նոր պաշտոնում անընդմեջ առնվազն երկու տարի աշխատելու դեպքում՝ չվճարել իրենց ուսման և վերապատրաստման համար կատարված ծախսերը.

14. Օրենքում ամրագրել փրկարարական ծառայողների էթիկայի հանձնաժողովի և բարեվարքության հարցերով կազմակերպչի ինստիտուտները, դրանց լիազորությունները և գործունեության կարգը.

15. Նախագծով նախատեսվում է կարգավորել նաև ռոտացիայի և օրենքով սահմանված այլ դեպքերում բնակության այլ վայր՝ մշտական բնակության վայրից առնվազն 50 կիլոմետր հեռավորությամբ այլ պաշտոնի փոխադրված ծառայողների սոցիալական երաշխիքների, այն է՝ ծառայության նոր վայրում ժամանակավոր բնակարանով ապահովելու կամ բնակարանի վարձակալության վճարի փոխհատուցում տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

3. Իրավական ակտի նախագիծը մշակող պատասխանատու մարմինը.

Նախագիծը մշակվել են Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է՝ հստակեցնել «Փրկարար ծառայության մասին» օրենքում Արտակարգ իրավիճակների նախարարությանը ենթակա Փրկարար ծառայության կարգավիճակը՝ որպես պետական կառավարման համակարգի մարմին, լրացնել Փրկարար ծառայության լիազորությունները, սահմանել Փրկարար ծառայությունում հաշմանդամություն ունեցող անձնաց աշխատանքով ապահովման հնարավորությունը, հստակեցնել Փրկարար ծառայությունում ծառայության անցնող անձանց նկատմամբ սահմանված չափանիշները, վերանայել ծառայության անցնելու մրցույթային կարգը և նախատեսել ծառայության անցման, պաշտոնի նշանակման (ծառայողական առաջխաղացման) ինչպես արտամրցույթային, այնպես էլ՝ մրցույթային կարգ, վերանայել նախարարության ուսումնական հաստատությունում փրկարարական ծառայության պաշտոններ զբաղեցնող ծառայողների ծառայության ժամկետը, ամրագրել փրկարարական ծառայողների գործուղված հաստիքների ինստիտուտը, հստակեցնել և կարգավորել ծառայողների Փրկարար ծառայության կադրերի ռեզերվում գրանցման հնարավորությունը, վերապահել փրկարար ծառայողների բուժսպասարկման գործառույթները Փրկարար ծառայության կազմում գործող բժշկական ստորաբաժանումը, հաշվի առնելով գործնականում նման իրավակարգավորումների անհրաժեշտությունը, նախատեսել փրկարարական ծառայողների պետական այլ մարմիններ, ուսումնական հաստատություններ գործուղելու, փրկարարական ծառայության թափուր կամ այլ պաշտոնի պարտականությունների ժամանակավոր կատարող նշանակելու վերաբերյալ

իրավակարգավորումներ, փրկարարական ծառայողները կիրացնեն ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված աշխատանքի ազատ ընտրության և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված կարգով տեղափոխվելու և այլ պետական մարմիններում ծառայությունը շարունակելու իրավունքը՝ հնարավորություն ունենալով առանց նշված փոխհատուցման ծառայության անցնել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված պետական մարմիններում, ռոտացիայի և օրենքով սահմանված այլ դեպքերում բնակության այլ վայր՝ մշտական բնակության վայրից առնվազն 50 կիլոմետր հեռավորությամբ այլ պաշտոնի փոխադրված ծառայողներին ապահոցել ծառայության նոր վայրում ժամանակավոր բնակարանով կամ բնակարանի վարձակալության վճարի փոխհատուցմամբ, կիստակեցվի փրկարարական ծառայողների ծառայության ժամկետն երկարաձգելու հետ կապված իրավակարգավորումները:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագիծը բխում Կառավարության 2021-2026թթ. ծրագրից:

6. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում ու ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին

Սույն նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության 2021 թվականի և հետագա տարիների պետական բյուջեներում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի առաջացնում:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Նախագծի ընդունման դեպքում օրենքից բխող որոշ ենթաօրենսդրական իրավական ակտեր կառաջացնեն լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն և պետական բյուջեի ծախսերում փոփոխություններ, օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակ, այն է՝ օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի նախագծերի մշակման և շրջանառության փուլում համապատասխան հիմնավորման մեջ կներառվի նաև անհրաժեշտ տեղեկատվություն՝ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին: